

Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06606

Tel. 372-0140

Փետրուար 28, 1971

Սիրելի անդամներ,

Կամոքն Աստուծոյ եւ Ձեր բոլորին ազնիւ գործակցութեամբ եւ համերաշխութեամբ ու սիրով բոլորեցինք յոջող տարի մը եւս։ Թէեւ եղան դժուարութիւններ եւ զանազան անակնկալներ լեցուն, սակայն յաջող տարի մը։ Որուն համար Փառք կուտամ Աստուծոյ եւ սիրով կողջունեմ Ձեր բոլորը որպէս մեր ազգին ազնիւ զաւակները, եւ այս դարաւոր հաստատուն եւ բարգաւաճ եկեղեցւոյ հաւատարիմ անդամները։ Թող Մեր Տէրը միշտ վառ պահէ մեր ազնիւ զգացումները սիրով համագործակցութիւնը եւ զիրար հասկնալու կամքը եւ եկեղեցիին ու մեր ազգային քրթէքներուն յաւերժական պահելուն իմաստուն թախ, եւ Ձեր բոլորը պահէ ու պահպանէ ամէն փոթձանքներէն ու միշտ արդուն հսկէ ձեր վրան Մեր Տիրոջը լոյսը, եւ Այս Եկեղեցւոյ մէջ միշտ յաւերժացնէ իր հաւատքն ու յոյսը եր Սէրը իրարու հանդէպ։

Արդ ստորիւ կուտանք մեր 1970 տարուան տեղեկագրութիւնը ըստ հետեւեալին Կրօնական եւ Վարջական։

ԿՐՕՆԱԿԱՆ.—

Ա. ԺԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

1970 տարուան ընթացքին մենք այս եկեղեցւոյ մէջ մատուցած ենք 3 իսուն էլ մէկ Կիրակիներուն Ս. Պատարաբա՛Մեծ Պահոց Կիրակիներուն Ս. Պատարաբին հետ նաեւ Արեւազալի Ժամերգութիւն յետ Ս. Պատարաբին, եւ Հսկումի Ժամերգութիւն։ Եւ Երկու ճրագալոյցի Ս. Պատարաբ եւ Ժամերգութիւն։ Եւ մէկ Երեկոյեան Հոգեհանգիստ

Բ. ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

1970նի տարուան ընթացքին տեղի ունեցած են հետեւեալ Ծիսակատարութիւնները.— 3 Սկրտութիւն եւ Ս. Դրօշմ. եւ 3 Թաղում։ Գերեզմանատան մէջ Օրհնութիւն, եւ Բառասունքներու ընթացքին թէ Ս. Պատարաբ եւ Գերեզմանի օրհնութիւն ինչպէս նաեւ տարեկիցներ։

Այցելած ենք հիւանդներուն ըլլան անոնք Հիւանդանոցի մէջ կամ իրենց բնակարանին մէջ եւ Ծերանոց։ Մեր այցլեութեանց թիւ եղած է մօտաւորապէս Բառասուն 40։ Հիւանդանոցներ.— Պրիճկորթ, Սէթն Վինսընթ, Բարթ Սիթի, Սէնթ Բաֆաբել Նիւ Հէյվըն, Ուէսթ Հայվըն Վեթըրնլ Հիւանդանոցը, Ֆերֆիլտ Հիլզ Նիւ Թաունի մէջ, Մէրլոտինի Հիւանդանոցը եւ Նորվուք Հիւանդանոցը։

ՏՈՒՆ ՕՐՀՆԵՆՔ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1970 Տարուան ընթացքին այցելած ենք 192 տուններ եւ կատարած ենք 42 Տան Օրհնութիւններ։

ՈՒՐԱՐԱԿԻՐ ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐ

Անշուշտ հոս անհրաժեշտ կը նկատեմ յիշել որ եկեղեցւոյ հաւատարիմ ու երկար տարիներու իր ծառայութիւնը բերած Ուրարակի Սարկաւազին Վարդան Սթամպուլեանին եւ անցեալ տարուան կիսուն մեր եւ Միսկան Խորհուրդին ջանքով ու հրաւերով

Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06606

Tel. 372-0140

Հոս յատկապէս կուգամ յիշել երկու աննուններ.— Տիար Յարութիւն Մակաղեան որ եղաւ առաջին ատենապետ ուր իր անձնական գոթին համար հրաժարեցաւ իր պաշտօնեն եւ մնաց Միսական Խորհուրդին մէջ, իսկ երկրորդ անձը՝ Տիար Թամ Ալթունեանը որ իր անձնական ու ծանր աշխատանքին տակ ըստանցնեց Միսական Խորհուրդի ատենապետութիւնը: Այս երկու անձերուն եւ Միսական Խորհուրդի կազմին կուգամ յայտնել իմ գնահատութիւնն ու շնորհակալութիւնը եւ մաղթել իրենց յաջողութիւնը:

Միսական Խորհուրդին կողմէ եղած բոլոր որոշումներուն մօտէն հսկած ենք եւ մեր գործօն մասնակցութիւնը բերած ենք անոնց կարգադրութեան եւ ամբողջացման:

ՀԱՅ ԴՊՐՈՑ

1970 տարուան ընթացքին ունեցած ենք մեր Հայ Դպրոցը: Ամէն Ուրբաթ օր Կէսօրէն յետոյ ժամը 4էն մինչեւ 5:30ին, կատարած ենք Հայ Դպրոցի Դասաւանդութիւնը Թրամպլի Հայ Սքուլին մէջ: Ուրախ եմ ըսելու որ այժմ ունիք 20 աշակերտութիւն 8 տարեկանէն մինչեւ 14 տարեկան փոքրերի: Իսկ ունեցած ենք նաեւ տարեցներու դասարան մինչեւ Յունիս 1970նին:

Մեր ջանքերով ու աշակերտներու աշխատանքով ունեցանք մէկ Հանդէս անցեալ Հոկտեմբերին:

Այս առթիւ իմ գնահատութիւնս կերթայ Հայ Դպրոցի Խնամակալութեան կազմին ու իրենց բերած աշխատանքներուն համար: Խնամակալութեան անդամներ են՝ Տք. Պերճ Հայրապետեան, Փրոֆ. Յակոբ Էթմէքճեան, եւ Պրն. Պերճ Խաչատուրեան: Այս Խնամակալութեան անդամներուն հետ ունեցած ենք ժողովներ օւ:

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Մեր սրտին մօտ եղած է Կիրակնորեայ Վարժարանը եւ անոր ունեցած Գործունէութիւնը: Մենք մօտէն հետքըքրուած ու գորածակցած ենք Կիրակնորեայ Վարժարանի Ուսուցչական Կազմին հետ: Ըրած ենք շնիշ թելադրութիւններ եւ մասնակցած ենք Ուսուցչական Կազմին Խորհրդակցական Ժողովներուն: Այս առթիւ մեր գնահատութիւնը կը յայտնենք Տեսուչին Տիար Ճան Աքաշեանին, եւ Ուսուցչական Կազմին, եւ մեր գնահատութիւն բոլոր աշակերտութեան:

Մասնակցած ենք անոնց կողմէ տրուած բոլոր ձերնարկներուն, Զրիմըս Բարթիին, Հալովին Բարթիին եւ Դաշահանդէսին:

ԽՈՐՀՐԴԱԿԱՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Մեր մասնակցութիւնը բերած ու նախադասած ենք եկեղեցւոյս ենթակազմակերպութիւններուն անդամական ժողովներ.— Տիկնանց Միութեան, Արանց եւ Կանանց Միութեան, Շինութեան Յանձնախումբին, 40 ամեակի Յանձնախումբին, Դպրաց Դասին, եւ Պաղարի Յանձնախումբին: Մեր գնահատութեան խօսք կուղենք այս Միութեանց ատենապետներին եւ իրենց Վարչական Կազմի անդամներուն.— Տիկ. Զէյ Տէմիրճեանին, Տիկնանց Միութեան Կ. Պրն. Ճէյմս Բըրնիթիին, Արանց եւ Կանանց Միութեան, Տիար Կարապետ Բաշեանին, Շինութեան Յանձնախումբին, Օրո. Սարա Տէր Մկրտիչեանին Դպրոց Դասին, եւ Գաղաթի 40 ամեակի Յանձնախումբին, Տիկ. Թերեսա Հայրապետեանին եւ Պաղարի Յանձնախումբին, Տիար Ճէյմըս Բըրնիթիին:



Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06606

Tel. 372-0140

ԱՅԼ ԺՈՂՈՎՆԵՐ

1970 տարուան ընթացքին մասնակցած ենք նաեւ Պրիմփորթ Քանսըլ աֆ Զըրջսի ժողովին որ ընդհ. անդամական ժողովն էր, իսկ յետոյ մասնակցած ենք Ինթըր-նէշընլ Ինսթիւթի ժողովին որ տեղի ունեցաւ մեր եկեղեցւոյ սրահին մէջ:

ԱՅԼ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Յուսալով որ աւելի օգտակար կը ըլլանք մեր եկեղեցւոյ կեանքին ու համայնքային աշխատանքներուն, անցեալ փետրուարին Արձնագրուեցանք Ունիվըսիթի աֆ Պրիմփորթի անգելերէն բաժնին ու հետեւացանք մինչեւ այս Յունուար Ծաբաթը չորս օր իւրաքանչիւր օրը մէկ ժամ տրամադրելով Դպրոցի Դասաւանդութեան եւ որոշ ժամանակ այլ դասերու պատրաստութեան:

Յերեմիտ Հիլլիզի Հիւանդանոցին կողմէ մեր ուշադրութեան յանձնուեցաւ որ, Մեր զաղութի անդամներէն մին կը մնայ այդ հիւանդանոցին մէջ, եւ այժմ ժամանակ լրացած է եւ պէտք է դուրս ելլէ: Մենք մեր մարտականութիւնը ըրինք այս անգամը տեղաւորելու Ծերանոցի մը մէջ: Եւ այսպէս որոշ խորհրդակցութիւններէ յետոյ Հիւանդանոցի Պաշտօնեաններուն հետ, կարգադրեցին որ այդ անգամը տեղաւորուի Ծերանոցին մէջ, ուր այժմ կը մնայ այդ Ծերանոցին մէջ, ուրախ եւ երջանիկ:

Եկեղեցւոյս անդամներէն մին մեր ուշադրութեան յանձնեց որ, Պէյրութէն նոր ժամանաց ընտանիք մը կայ, եւ այդ ընտանիքին Հայրը այժմ անգործ է եւ պէտք ունի աշխատանքին: Մեր մեր պարտականութիւնը նկատեցին օգնել այդ ընտանիքին որ ունենայ իր գործը, եւ իր հետ մինասին փնտրեցինք գործ մը, որ այժմ կը կաշախատի հոգ այդ աշխատանոցին մէջ:

1970 տարուան ընթացքին մենք մեր պարտականութիւնը ըրինք հետքըքրութիւն մը ստեղծել մեր պատանիներուն մէջ: Երկու անգամ անձնապէս հրաւէր դրկեցին մօտաւորապէս 35 երիտասարդներուն եւ Պատանիներուն: Մեր առաջին հանդիպումը եղաւ քաջալերական եւ երկրորդը յուսահատական: Սակայն, Ծիսկան Խորհուրդի Ատենապետին հետ, Գաղութիս Կարգ մը անհատներուն հետ խորհրդակցելով եւ թիմելով ծնողներուն եւ պատանիներուն կրկին ու կրկին անգամներ վերջապէս կրցանք վստահութիւն ներշնչել ու համոզել ժոց Պատանիներուն ու Երիտասարդները որ Կազմակերպութի Երիտասարդութիւնը: Ուրախ եւ հպարտ եմ ջեզի տեղեկացնելու որ, այսօր այդ խումբը ունի 15 անդամ, եւ յուսով ենք որ շաբաթէ շաբաթ պիտի աւելնայ անոնց թիւը ու գործունէութիւնը: Այս առթիւ մեր գնահատութիւնը ու շնորհակալութիւնը կերթայ Տիկ. Լիլին Էթմաքճեանին, Տիկ. Պեթի Տինիհէնեանին եւ Տիար Թամ Ալթունեանին եւ Երիտասարդներուն որ մեր այս ջանքերը գործնականացուցին եւ քաջալերեցին իրենց խորհրդակցութեամբ եւ գործակցութեամբ:

ԹԵՂ ԱԴՐՈՒԹԻՒՆ

Ծուխիս Կրօնական, եկեղեցական, ազգային ու մշակոյթային կեանքի յառաջ-դիմութեան համար անհրաժեշտ կը նկատեմ հետապնդումը հետեւեալ կէտերուն:—

ա. Ծուխիս անդամները աւելի մօտէն հետքըքրութեան են մեր Կիրակի Օրուան պաշտամունքով: Կիրակի Օրուայ պարտութիւններուն սիրով եւ երկիւղածութեամբ բերեն իրենց մասնակցութիւնը, որպէս զի եկեղեցին, պաշտամունքը, եւ աղօթքները ըլլան իրենց կեանքին կենսական մէկ բաժինը:

Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06606

Tel. 372-0140

բ. Մեր ունեցած երկու Դպրոցները, Հայ Դպրոցն ու Կիրակնորեայ Վարժ. ըլլալու է իրենց հետաքրքրութեան առարկան, եւ իրենց օգնութեամբ պէտք է քաջալերեն անոնց յարատեւ գոյութիւնն ու կենսունակութիւնը:

գ. Մեր Եկեղեցւոյ Թնթակազմակերպութիւնները աւելի մօտէն պէտք է հետաքրքրուին մեր մշակոյթով, անոր սատարած գրական, գեղարուեստական, եկեղեցական ու ազգային կեանքը հետաքրքրող նիւթերով պատճառ դարձնեն աւելի կենսական դարձնելու մեր գոյութիւնը այս ապրիլուն վրայ: Մեր նոր սերունդը կարօտը ունի այս ձեռնարկներուն որպէս սորվի ու սորվեցնէ իրենց փառաբանող սերունդներուն: Ուրեմն ի միտ ունենալով մեր այս թելադրութիւնները իրենց ժողովներուն մէջ աւելի մօտէն հետաքրքրուին եւ կազմակերպեն իրենց ձեռնարկները:

ՄԱՍՆԱԴՈՐ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի թիւս Հոգեւոր Հովիւ Մենք պարտք կազանք հոս մեր գնահատութիւնը յայտնել հետեւեալ անհատներուն որ 1970 տարուայ ընթացքին իրենց կողմէ եղած ազատ կամքով բերուած աշխատանքներուն:—

Տիկ. Գեղան Սթամպուլեանին որ բժախնդրութեամբ կատարեց Ս. Սեղանին մաքրութիւնն ու Ծածկոցներուն փոփոխութիւնը:

Տիրացու Վարդան Սթամպուլեանին որ գործակցութիւնը բերաւ եկեղեցւոյ շենքին հսկողութեան եւ շինարարութեան:

Պրն. Ամիրա Տինիհանեանին որ բժախնդրութեամբ կատարեց եկեղեցւոյ արտաքին բաժնին մաքրութիւնը, Ամառը ամբողջ խոտերը կտրեց, Պատին շինութիւնը կատարեց, եւ ձիւնան ձիւնը մաքրեց:

Պրն. Ճօզեֆ Տամթոյին եւ Յակոբ Խաչատուրեանին որ եկեղեցւոյ ջահերուն մաքրութիւնը կատարեց:

Պրն. Ռիչըրտ Գալեհայեանին որ եկեղեցւոյ մաքրութեան հոգ տարաւ:

Սիրելի Հաւատացեալներ, Մեր անձնական գնահատութիւնն ու շնորհակալութիւնը կերթայ Ձեր բոլորին անխտիր, որ Դուք Ձեր նիւթական ու բարոյական մասնակցութեամբ ոգեւորեցիք մեզ ու մեր աշխատանքները: Դիւրացուցիք մեր այս ուսերուն վրայ դրուած այս ծանր լուծը, եւ ջանացիք ձեր կարելի ջախով օգտակար ըլլալ մեր բերած ձեռնարկներուն: Ուրեմն, կաղօթեմ Աստուծոյ որ Ձեր բոլորին տայ կատարեալ առողջութիւն եւ յաջողութիւն, Աստուած իր Շնորհներով Ձեր բոլորը լեցնէ ու տայ մեր բոլորին նիւրումի եւ գոհողութեան ոգին որ այս տարուայ եւ յառաջիկայ տարիներուն համար մեր բոլոր գործերը ըլլան շահաբեր ի փառս Աստուծոյ եւ ի Պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս: Ամէն:



Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06606

Tel. 372-0140

Ս. Սեղանին սպասարկելու համար իր մասկնադուլիները բերաւ Տիրացոյ Վրեժ  
Եւփուճեան Տէնպէրի, Բնէ. եւ նաեւ Վարդան Թարգիւնեանը եւ ձօրճ Գալեայեանը:  
Ս. Պատարազի մատուցման իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Օպրապետուհի  
Տիկ. Գեղան Սթամպուլեան եւ Երզնէացիներ Օր. Էլմա Մաթէոսեան ուր տարուան կիսուն  
իր անհատական պատճառներով հրաժարեցաւ իր այդ պաշտօնին եւ, մեր ջանքերով  
ու հրաւէրով եւ Միակն Նորհուրդին հետ համագործակցութեամբ արժամեայ կը  
նուազէ Տիկ. Ճենի Գալեայեան: Եւ Դպրաց Դասի անդամները Ուրեմն, իբրեւ Հոգեւոր  
Հովիւ անկեղծ զգացումներով կուգամ զնահատել ու շնորհակտել մեր այս անձնուէր  
ժառանգը եւ մաղթել որ Աստուած տայ իրենց կարողութիւն եւ ուժ եւ յաջողու-  
թիւն իրենց կեանքի ու գործունէութեանց մէջ:

ՄԱՍԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Անցեալ Յուլիսին ի վեր մենք մեր կրօնական ծառայութեանց կարգին պատրաս-  
տեցինք եկեղեցւոյ Մասուէլ սական, պարտք կազանք հոս յիշելու որ, հետեւեալ  
անձեր եւս իրենց մասնակցութիւնը բերած են մասի պատրաստութեանց մէջ. — Տիկ.  
Ռօզ Սթամպուլեան, Տիկ. Մէյրի Կոբոյեան, Տիկ. Էլիսօր Զիսք, Տիկ. Ֆիլիս Աւազեան,  
եւ Տիկ. Մարթա Խաչատուրեան:

ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1970 Տարուան ընթացքին ջանացած ենք կանուանուող պահել մեր գրասենեակի աշխա-  
տանքները: Գրասենեակի ժամանակացոյցը, եւ այս միջոցին ընթուանած ենք հիւրեր,  
ըրած ենք հեռաձայնի աշխատանքներ խօսելով ու հետքը բերուելով մեր բարեպաշտ  
ժողովուրդին հետ, եւ բերած ենք մեր աշխատանքները Յայտարարութիւն պատրաստելու,  
նամակներ գրելու եւ այլ գործերուն մէջ: Առաջնորդանախին հետ պահած ենք  
սերտ յարաբերութիւն:

ԱՍՐԻ ԼՈՒՐ"ի աշխատանքները տարուած են մեր կողմէ եւ նաեւ Տէր եւ Տիկ. Ռիշըրտ  
Գալեայեանի կողմէ: Մինչեւ անցեալ 1970 տարուայ Յուլիսին: Որ Գալեայեան  
ընտանիքին ծանրաբեր գործունէութեանց պատճառով այժմ ժամանակուորապէս  
կեցած է այդ հրատարակութիւնը մինչեւ ցնոր կարգադրութիւնը: Հոս կուգամ իմ  
ու Միակն Նորհուրդին զնահատութիւնը յայտնել Գալեայեան ընտանիքին իրենց  
բերած աշխատանքին համար:

ՎԱՐՋԱԿԱՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՋԱԿԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

1970 տարուան ընթացքին մասնակցած ենք Թեմական Պատգամաւորական Ժողովին եւ  
Հոգեւորականաց Համագումարին, որ տեղի ունեցաւ Ապրիլ 29 եւ 30 Մայիս 1 եւ 2  
Նորթ Ֆիլատեֆիոյ Ս. Երրորդութիւն Հայց Եկեղեցւոյ մէջ: Այս ժողովներուն  
մեզի հետ ունէինք նաեւ Փրոֆ. Յակոբ Էթմէքճեանը: Այս ժողովներուն ընթացքին էր  
որ տեղի ունեցաւ ընտրութիւն Թեմիս Առաջնորդ Գերշ. Թորգոմ Արք. Եպս. Մանուկեանը  
եւ եղան մասնաւոր որոշումներ Առաջնորդարանիս եւ Եկեղեցիներու բարգաւաճման համար  
Մեր զնահատութիւնը եւ շնորհակալութիւնը Փրոֆ. Յակոբ Էթմէքճեանին:

ԾԱԿԱՆ ՆՈՐՀՈՒՐԴ

1970 տարուան ընթացքին Եկեղեցւոյս Միակն Նորհուրդի կազմին հետ գործեցին  
անխտրաբար: Ունեցանք 35 ժողովներ ուր այս ժողովներու ընթացքին համախորհրդակցաբար  
եւ համագործակցաբար վեր առինք Եկեղեցւոյ շահն ու բարգաւաճումը: Առինք որոշ  
քայլեր թի Եկեղեցւոյ պայծառութեան համար եւ ի Փառս Աստուծոյ: